

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան

21 փետրվարի 2023թ.

2023 թվականի փետրվարի 07-ից մինչև 21-ը ներառյալ Բյուրեղավանի համայնքապետարանը կազմակերպել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023-2027 թվականների զարգացման հնգամյա ծրագրի վերաբերյալ հանրային քննարկումներ: Հանրային քննարկումների մասին հրավերը հրապարակվել է Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ (տես՝ <http://byureghavan-kotayk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=84d808c3-56c7-4997-9bc0-212e9f7e47d3> հղումով), ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև փակցվել էր Բյուրեղավանի համայնքապետարանում, ՀՈԱԿ-ներում, Նոունուս և Ջրաբեր բնակավայրերում առկա ցուցատախտակներին:

Օրակարգում՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու՝

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023-2027 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Փետրվարի 07-ից մինչև 21-ը ներառյալ էլեկտրոնային եղանակով կայացած քննարկումների ընթացքում ներկայացված նախագծերի վերաբերյալ շահագրգիռ անձանց կողմից էլեկտրոնային կայքում եղան դրական կարծիքներ: Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում անհայտ օգտատերը առաջարկել է հնարավորինս սեղմ ժամկետում Օղակաձև փողոց տանող ճանապարհը լուսավորել:

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023-2027 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագծին հավանություն տալ և գնահատել դրական:

Քննարկումների պատասխանատու և վարող՝
Բյուրեղավան համայնքի ղեկավար՝

Նոունուս բնակավայրի վարչական ղեկավար՝

Արձանագրող՝ Բյուրեղավանի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝

Հ. Բալասյան

Մ. Գևորգյան

Լ. Ավուշյան